

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ՝ ԵՒՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱԶԵԻՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Ալեքսանդր Մանասեան

Ստրաստբուրգում այս տարուայ Մարտի 11ին Ղարաբաղեան հակամարտութեան քաղաքական կարգաւորման շուրջ Եւրախորհրդարանի ընդունած բանաձեւը հետաքրքիր է մի շարք առումներով: Կասածից վեր է, որ արտաքին քաղաքական մեր ծառայութիւններում այն ըստ ամենայնի կ'ուսումնասիրուի: Ստորեւ շարադրուող մեր նկատառումները, բնական է, չեն յաւակնում վերջնականապէս սպառնիչ կերպով բնութագրել փաստաթուղթը կամ առարկութիւն չհանդուրժող եզրակացութիւններ առաջարկել խնդրով զբաղուողներին:

Միջազգային քաղաքական տեսակետից, մեր կարծիքով, Եւրախորհրդարանի ընդունած փաստաթղթից բխող առաւել կարեւոր հետեւութիւնները յանգում են հետեւեալին:

Առաջին. եւրոպական համայնքը այդ բանաձեւով նեցուկ է կանգնում Ղարաբաղեան անուանուած հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը՝ արտայայտելով խաղաղութեան գործընթացին գործնական քայլերով աջակցելու իր պատրաստակամութիւնը:

Երկրորդ. եւրոպական համայնքը արձանագրում է ընդունում է բանակցային գործընթացում մինչ այժմ ձեռնարկուած քայլերի ու մօտեցումների անպտուղ եւ անարդիւնաւետ լինելու փաստը եւ նոր մօտեցումների մշակման անհրաժեշտութիւնը:

Երրորդ. պաշտպանում է Մինըսկի Խմբի համանախագահների կողմից

մից որդեգրած նոր մօտեցումը Արեւելեան Անդրկովկասում նախկին Ադր.Խ.Ս.Հ. սահմաններում նոր հայ-ադրբեջանական «ընդհանուր պետութիւն» ստեղծելու վերաբերեալ եւ պատրաստակամութիւն է յայտնում դրա իրականացմանը նպաստել ամենատարբեր ձեւերով՝ յօգուտ նոր գաղափարի քարոզչութիւնից մինչեւ ոչ-կառավարական կազմակերպութիւնների միջոցով ի նպաստ խնդրի նման հանգուցալուծման գործունէութեան խրախուսումը TACISի օգնութեամբ:

Ի հարկէ, նախաբանի ու եօթ կէտերի մէջ ամփոփուած բանաձեւի բովանդակութիւնը չի սպառում վերն առանձնացուած դրոյթներով: Այն թէ՛ իր տեքստում է թէ, մանաւանդ, ենթատեքստում պարունակում է քաղաքական ու իրաւական տեսակետներից հետաքրքիր այլ դրոյթներ:

Յիշատակելի են մասնաւորապէս Ադրբեջանի եւ Հայաստանի Հանրապետութիւններում կայացած նախագահական ընտրութիւնների գնահատման, 1991 թուականի Սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի անկախացման, հակամարտութեան կարգաւորման ընթացքում մարդու իրաւունքների տարրի գերակայութեան մասին պնդումները: Բայց դրանցով հանդերձ վերն առանձնացուած դրոյթներն, անկասկած, ամփոփում են բանաձեւի գլխաւոր բովանդակութիւնը, նրա հիմնական լիցքը:

Նոր փաստաթուղթը վկայում է, որ եւրոպական համայնքը նոյնիսկ Բաքուի կտրուկ մերժումների դէպ-

քում հեշտ չի հրաժարուի «ընդհանուր պետութեան»՝ որպէս հակամարտութեան քաղաքական եւ իրաւական հանգուցալուծման միջոցի գաղափարից:

Աւելի՛ն, բանաձեւի երրորդ կէտում Եւրախորհրդարանը կոչ է անում այդ ուղղութեամբ շարունակել «հակամարտութեան տեւական կարգաւորման հասնելու նպատակաւ ուղղուած իր ջանքերը»: Այնպէս որ, ամենաքիչը մօտակայ մէկ-երկու տարիների ընթացքում Ղարաբաղեան խնդրի շուրջ միջազգային քաղաքական գործընթացները ծաւալուելու են «ընդհանուր պետութեան» գաղափարի համատեքստում: Սա նշանակում է, որ խնդրի գիտական, արտաքին քաղաքական, դիւանագիտական եւ, ինչու չէ, նաեւ քարոզչական մեր ջանքերը ուղղուած պիտի լինեն այդ մօտեցման իմաստաւորմանը, նրա ներուժի վերհանմանը, ընդհանուր պետութեան գաղափարի տարբեր ծալքերի եւ հնարաւոր ծաւալումների ուսումնասիրութեանը:

Ակնյայտ է, օրինակ, որ Մինսկի Խումբը միջազգային իրաւունքի տեսակետից մի տեսակ անբացայայտ ձեւով առաջադրուած «ընդհանուր պետութեան» գաղափարի մէջ կարեւորում է ազգերի ինքնորոշման եւ սահմանների անձեռնմխելիութեան սկզբունքների ներդաշնակումը եւ համատեղումը, նրանց միջեւ, իբր, գոյութիւն ունեցող հակասութեան յաղթահարումը: Սակայն սա առաջարկի հնարաւոր իրաւաքաղաքական հիմնաւորումներից ու բացատրութիւններից մէկն է միայն:

Ոչ պակաս համոզիչ է հիմնատր կարող է լինել «ընդհանուր պետութեան»՝ որպէս **ստատուս քուօի** պահպանման (կամ վերականգնման) մեկնաբանութիւնը: Այդ դէպքում, 1991 թուականին Լ.Ղ.Հ. կայացման օրինակաբանութեան (լեզատիմութեան) մասին արդէն իսկ այս փաստաթղթում ակնարկուած դրոյ-

թի կողքին կարելի կը լինի հնչեցնել իրաւական այն հիմնարար փաստը, որ նախկին Ադր. Խ.Ս.Հ.ն, ըստ էութեան, եղել է «ընդհանուր պետութիւն»:

Պարզ է, որ Մինսկի Խմբի համաձայնագրահների նոր առաջարկի այս երկրորդ մեկնաբանութիւնը մեզ համար աւելի շահեկան է թէ՛ խնդր-

րի կարգաւորումը իր անմիջական իրաւական հիմքերին կապելու (եւ այդ իմաստով քաղաքականցման մակարդակը նուազեցնելու), թէ՛ մեզ համար նպաստաւոր հնարաւոր իրաւական հետեւանքների իմաստով: Դիւանագիտական նպատակայարմարութեան հարց է մնում այն, թէ «ընդհանուր պետութեան»

իրաւական բովանդակութեան յըստակեցման ո՛ր փուլում հարկ կը լինի նոր շեշտադրումներ մտցնել այդ գաղափարի մեկնաբանութեան մէջ: Գա պէտք է արուի՝ բանակցութիւնների ընթացքից ելնելով: Չի բացառուում, օրինակ, որ հասարակական կազմակերպութիւնները եւ առանձին քաղաքական գործիչներ պէտք է առաջ անցնեն պաշտօնական դիւանագիտութիւնից՝ ստատուս քուօի պահպանման եւ վերականգման գաղափարի եռանդուն շրջանառութեամբ նախապատրաստելով նոր մեկնաբանութիւնների դաշտը արտաքին քաղաքական մեր ծառայութիւնների համար:

Բաքուն արդէն իսկ տանում է նման աշխատանք՝ քաջ գիտակցելով խորհրդային ժամանակների ստատուս քուօի պահպանման (վերականգման)՝ իր համար անցանկալի հետեւանքների վտանգը: Յատկանշական է այդ իմաստով Հէյդար Ալիեւի վերջերս կատարած յայտարարութիւնն այն մասին, որ «ընդհանուր պետութեան» գաղափարն անընդունելի է Բաքուի համար այն պատճառով, որ այն... իր նախադէպը չունի միջազգային պրակտիկայում: Բաքուն փաստօրէն ոչ-ուղղակի ձեւով յայտարարում է, թէ նախկին Ադր. Խ.Ս.Հ.ն ընդհանուր պետութիւն չի եղել, որ իբր Ադրբեջանում առաջին անգամ պիտի ստեղծուի (եթէ, ի հարկէ, ըստեղծուի) հայ-ադրբեջանական ընդհանուր պետութիւն: Այլ կերպ, Բաքուն նոր մօտեցումը ներկայացնում է որպէս ստատուս քուօի խախտում, այն դէպքում, երբ իրականում դա ստատուս քուօի պահպանում (կամ վերականգնում) է:

Համաձայնելով ստատուս քուօի վերականգման (նոյնն է թէ՛ ընդհանուր պետութեան) գաղափարն ընդունել որպէս բանակցային գործընթացի վերսկսման պայման, հայկական կողմերը պաշտօնական եւ ոչ-կառավարական մակարդակներով պարտաւոր են միջնորդներին յիշեցնել, որ եւ Արցախի հայութիւնը, եւ

Ադրբեջանի հայ ժողովուրդը խորհրդային տարիներին համոզուել են երրորդ կողմերի տուած երաշխիքների անյուսալիութեան մէջ: Խ.Ս.Հ.Մ.ը՝ որպէս Լ.Ղ.Ի.Մ.ի եւ Ադրբեջանի հայ ժողովրդի հաւաքական անվտանգութեան երաշխաւոր, փաստօրէն, ոչինչ չարեց ողջ Արեւելեան Անդրկովկասից հայութեան բռնի տեղահանութիւնը եւ ջարդերը կանխելու համար: Աւելին, Խ.Ս.Հ.Մ. միութենական կառոյցները եւ առաջին հերթին՝ բանակը անմիջական մասնակցութիւն ունեցան այդ բռնարարքների կազմակերպման եւ իրագործման մէջ: Այնպէս որ պատմական փորձը յուշում է, թէ մեզ անվտանգութեան այլ կարգի երաշխիքներ են պէտք:

Մէկ այլ կարեւոր հանգամանք էւս: «Ընդհանուր պետութեան» մասին առաջարկը ենթադրում է խնդիրը գոնէ մասնակիօրէն քաղաքական դաշտից տեղափոխել իրաւական դաշտ: Բուն գաղափարն ունի

իր մէջ այդ ներքին հնարավորութիւնը եւ այն, թէ որքանով կը յաջողուի խնդիրը ապաքաղաքականացնել, կախուած կը լինի մեր ջանքերից ու եռանդից:

Վերջին նկատառումը. Հայաստանի Հանրապետութեան եւ Լ.Ղ.Հ. ոչ-կառավարական այն կազմակերպութիւնները, որոնք ժողովրդական դիւանագիտութեան գծով կը ներգրաւուեն հակամարտութեան կարգաւորման քաղաքական գործընթացի մէջ, պարտաւոր են համակարգել իրենց ջանքերը եւ համաձայնեցնել այն համատեղ մշակուած որոշակի հայեցակարգով: Այդ հարցը աւելի քան հասունացել է, քանի որ մեզանում շատ կազմակերպութիւններ, որոնք մինչ այժմ մասնակցել են նման ծրագրերի, յաճախ ներկայացել են՝ չտիրապետելով խնդրի քաղաքական եւ իրաւական նրբութիւններին: